



Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Reverend
Houssig Nishanian
Pastor
Telephone (416) 759-6958

Toronto... 11 Փետրուար 82
19.....

Յարգելի Անդամ եւ Անդամուհի

Պարզ թուղթի վրայ գրուած, անստորագիր եւ " Բացատրական Տեղեկագիր" հորատարով շրջաբերական մր եթէ ստանաք, ուր կարելոր եւ յատկանշական իրողութիւններ զանց առնուած են, հետեւեալ լրացուցիչ տեղեկութիւններն ալ հանեցէք նկատողութեան առնել:

1- Անստորագիր գրութեան առաջին էջին վրայ, թիւ 1 պարբերութիւնը ծիական Խորհուրդին Տուրքերու Գործակալութեան դրկած 21 Օգոստոս 1980 թուակիր նամակին Յարգմանութիւնն է: Այդ Յարգմանութեան 10րդ տողին վրայ գրուած " օժանդակութիւն " բառը, անգլիերէն բնագրի "service" բառին եւ 13րդ տողին վրայ գրուած " թեմական " բառը, բնագրին մէջ գրուած " financial " բառին ճշգրիտ Յարգմանութիւնը ոլլալէ շատ հեռու են:

2- Թիւ 2 պարբերութիւնը, ծիական Խորհուրդին Տուրքերու Գործակալութեան ստացած 14 նոյեմբեր 1980 թուակիր նամակին մասին է: Տուրքերու Գործակալութիւնը իր այս նամակին մէջ կը գրէ.

" As the Diocese of the Armenian Church of America is not a qualified donee we must advise that any distribution of funds to the Diocese would not provide for compliance with the provisions of the Income Tax Act and, as such, could place the status of the Holy Cross Armenian Church as a registered charity in jeopardy. "

3- Թիւ 4 պարբերութեան մէջ, Տուրքերու Գործակալութեան Պր.Ս. Չափեանի ուղղալ պատասխան նամակին կ'անդրադարձուի: Այդ պարբերութեան մէջ ինչ որ չէ գրուած, նամակի հետեւեալ նախադասութիւնն է. " If in fact 'servieces' are being rendered to the Holy Cross Armenian Church by the Diocese, it will be necessary for the Canadian church to verify this contention, and to maintain sufficient records to substantiate that such 'services' have been purchased, and purchased at a reasonable cost. "

4- Այս անստորագիր շրջաբերականին մէջ հետեւեալ փաստաթուղթը բոլորովին զանց առնուած է.

Տուրքերու Գործակալութիւնը, ծիական Խորհուրդին ուղղեալ 13 Ապրիլ 1981 թուակիր նամակին մէջ հետեւեալը կը գրէ.

17-11-1982 1 9 999...

" As stated in Mr. Chapien's letter, the Diocese views the 'Diocesan Dues' as payment for services rendered. Before such payment is made, the Holy Cross Armenian Church should verify for its own purposes, as well as those of this Department, that this is in fact the case. We would also advise that sufficient records should be maintained to substantiate that these 'services' were purchased at a reasonable cost should the Church 'purchase' same. "

Ժխական Խորհուրդի երեք ներկայացուցիչները՝ Տիկին Շաքէ Շահնազար, Տօթթ. Ա. Վարդան Այնաճեան եւ Պր. Արմէն Զիւրքճեան 9 Յունիս 1981, Երեքշաբթի օր, նիւ Եօրք, Առաջնորդ Սրբազանի հետ, տուրքի վճարման օրինաւոր ձեւ մը գտնելու համար, երբ տեսութիւն մը ունեցան, վերոյիշեալ նամակի մէկ օրինակը Առաջնորդ Սրբազանին յանձնեցին: Այս յանդիպման, Առաջնորդ Սրբազան խոստացաւ իր փաստաբանին միջոցաւ նամակ մը պատրաստել տալ ու ժխական Խորհուրդին ղրկել, որպէսզի ժխական Խորհուրդը զայն Տուրքերու Գործակալութեան ղրկելով տուրքի փոխանցման օրինաւոր ձեւ մը գտնուի: Այսպիսի ուղղեցոյց նամակ մը ժխական Խորհուրդը երբէք չստացաւ:

5- Երջաբերականի 5րդ պարբերութիւնը, 1981 տարուայ Պատգամաւորական ժողովին մէջ Ս.Խաչ Եկեղեցւոյ մասին եղած խօսակցութիւններու եւ առնուած որոշումներու յատկացուած է:

27 Ապրիլ 1981ին, Առաջնորդարանի վարիչ-քարտուղարը ժխական Խորհուրդի Ատենապետին հեռաձայնով ըսած է թէ՝ ծուխը իր թեմական տուրքը չվճարած, ծուխին Թեմայան Պատգամաւորները Պատգամաւորական ժողովին չգան: Հակառակ այն իրողութեան թէ՝ Ս.Խաչի Պատգամաւորներուն ժողովի մասնակցելու իրաւունքը զլացուելու որոշում առնուած է, Թեմական Պատգամաւորական ժողովի մասնակցելու իրաւունք ունեցող անձերէ կազմուած յանձնախումբի մը մէջ Ս.Խաչի ներկայացուցիչն ալ նշանակուած է: Երկու հակասական որոշումներ:

Որեւէ հաստատութեան ներգին կանոնադրութիւնը (By-Laws) երկրին օրէնքներուն հակառակ յօդուած մը չկրնար ունենալ: Ներգին կանոնադրութիւնները երկրին օրէնքներուն համաձայն պէտք է ըլլան եւ մեր Թեմական կանոնադրութեան 96րդ յօդուածին ոգին ալ ասիկա ձեւով մը կ'ընդունի:

Հակառակ վերոյիշեալ իրողութեան, այդ շրջաբերականի 5րդ պարբերութեան մէջ գրուած է՝ ... Ս.Խաչ Եկեղեցին չվճարելով իրեն սահմանուած տուրքը՝ նովին իսկ գործով ոտնահարած է Թեմական կանոնադրութիւնը: Տուրքի փոխանցումը երբ որոշ օրինական ձեւակերպութիւններու ենթակայ է եւ Առաջնորդարանը այդ ձեւակերպութիւնները կատարելէ կը խուսափի, ծուխը ի նշպէս Թեմական կանոնադրութիւնը ոտնահարած կ'ըլլայ:

Ծուխը ոչ թէ 1979 տարուայ կէսըրդուն Թեմական հշխանութեան ներքեւ առնուած է, այլ՝ 1979ի վերջաւորութիւններուն, փաստ՝ Առաջնորդ Սրբազանի 13 Սեպտեմբեր 1979 թուակիր եւ 26506 թիւ նամակը եւ առաջին Ս. Պատարագը մատուցուած 30 Սեպտեմբեր 1979ին:

Վերջին տասր տարիներու ոնժագրին, Գանատայի մէջ, Հայաստանեայց եկեղեցւոյ չորս նոր ծուխեր հաստատուած են. Վէնքուվրո՝ Ս.Վարդան, Համիլթօն՝ Ս.Մարիամ Աստուածածին, Օթաւա՝ Օթաւայի Հայաստանեայց եկեղեցի եւ Քորոնթօ՝ Ս.Խաչ: Ասոնցմէ ամենահինը՝ Ս.Վարդան (1972), որ ինքզինքը եկեղեցի մը գնելու կարողութեան մէջ կը զգայ եւ երրորդը՝ Օթաւայի ծուխը, տակաւին տուրքի չեն ենթարկուած: Իսկ 1976ին հաստատուած Համիլթօնի ծուխը, 1980 տարունէ սկսեալ թեմական տուրքի ենթարկուած է: Գալով Ս.Խաչի, ան իր հաստատումէն անմիջապէս չորս ամիս վերջ, 20 Յունուար 1980, թեմական տուրքի ենթարկուած է:

Նոյն պարբերութեան մէջ կը կարգանք թէ՛ Ս.Խաչ 1979 տարուայ տուրքէն ազատ կացուցուած է եւ անոր յաւելեալ շնորհք մը եւս եղած, ու 1980 տարուայ տուրքը՝ 9,117.00 ամերիկեան տօլար, զեղչուած է 4,559.00 ամերիկեան տօլարի: Եթէ միւս երեք ծուխերը, իրենց հաստատումէն անմիջապէս վերջ թեմական տուրքի ենթարկուած ըլլային, այն ատեն միայն, Ս.Խաչի համար եղածը ՝ շնորհք ՝ ըլլալով կարելի էր նկատել: Իրողութեան մէջ տուրքի զեղչումը սա ձեւով եղած է.

Ս.Խաչ ծուխին՝ թեմական Խորհուրդի 20 Յունուար 1980 օրուայ նիստին, 8,000.00 ամերիկեան տօլար տուրք նշանակուած է: Այս գումարը ծուխին համար շատ բարձր ըլլալուն, օրուայ Առաջնորդի Փոխանորդ Հայր Սուրբի մօտ, ծխական Խորհուրդին ներկայացուցած խնդրանքին վրայ, թեմական Խորհուրդը՝ իր 18 Ապրիլ 1980 օրուայ նիստին, ծուխին տուրքը բարձրացուցած է 9,654.00 ամերիկեան տօլարի եւ յիսուն առ հարիւր զեղչելով, ծուխին 4,827.00 ամերիկեան տօլար տուրք նշանակած է:

1979 տարուայ ծուխին եկամուտը 24,029.00 զանատական տօլար եղած է, իսկ ելքը՝ 16,533.00 տօլար, զուտ հասոյթ ձգելով 7,495.00 զանատական տօլար: Ծուխերու տուրքի 1980 տարուայ ցանկին մէջ Ս.Խաչի համար 9,117.00 ամերիկեան տօլար տուրք արձանագրուած է: Այդ օրերու սակով այդ գումարը մօտաւորապէս 10,500.00 զանատական տօլար կ'ընէր:

1980ին ծուխին եկամուտը եղած է 35,375.00 զանատական տօլար եւ ելքը՝ 29,436.00, զուտ հասոյթ ձգելով 5,938.00 զանատական տօլար: 1981 տարուայ ծուխին թեմական տուրքը 12,515.00 ամերիկեան տօլար էր: Ասոր զանատական փոխարժէքը մօտաւորապէս 15,000.00 տօլար է:

Առաջնորդարանը, ծուխերու տարեկան ելեւմտական հաշուետուութիւնը ստանալէ վերջ է որ ծուխերուն տուրքերը կը ճշդէ: Որով կը տեսնուի թէ՛ Ս.Խաչ եկեղեցիին ինչպիսի ՝ շնորհք ՝ մը եղած է:

Ս.Խաչ եկեղեցին Գանատական արձանագրեալ հաստատութիւն մըն է: Անոր ծխական Խորհուրդի անդամները, այս հիւրնկալ երկրին օրէնքներուն տրամադրութեանց հնազանդ Գանատացի բաղաբացիներ են: Այս վարչութեան

Տուրքերու Գործակալութեան գրած նամակը `` Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդական Վիճակի Թեմական Կանոնադրութեան ոգիին եւ տանին զանցառու ընթացք `` յաւանդու կը նկատուի:

Կ`ուզէին զիտնալ, թէ ծխական Խորհուրդին` պետական օրէնքներու սահմանին մէջ գործելու նպատակաւ, պետական պատկան գործակալութեան մը մօտ նամակ գրելը Թեմական Կանոնադրութեան ո`ր յօդուածին հակառակ է կամ ո`ր յօդուածը զանցառութեան առնուած:

Խնդրոյ առարկայ շրջաբերականի 5րդ պարբերութեան վերջին հատուածին մէջ, Պատգամաւորական Ժողովին Ս.Խաչ ծուխի առնչութեամբ առնուած որոշումի մը մասին գրուած է. ``... այս Թեմական Ժողովը որոշում առնէ որպէսզի Առաջնորդը եւ Թեմական Խորհուրդը այս հարցին կապակցութեամբ անհրաժեշտ քայլերը առնեն` ըստ իրենց հայեցողութեան `` : Հոս տեղին է յիշել թէ` Առաջնորդարանի իսաստաքան եւ Պէյսայտ նիւ Եորք, Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Թեմական Պատգամաւոր Փաստաքան Պր. Ե. Չափեան, այս առաջարկին հակառակ քուէարկած է եւ ինդրած է որ ասիկա ատենագրութիւններու մէջ յատկապէս արձանագրուի:

Նոյն հատուածի 5րդ տողը կը կարդանք թէ` Ս.Խաչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի 1981 Փետրուարի ընտրութիւնները չէ վաւերացուած, որովհետեւ ծխական Խորհուրդը` Թեմական Խորհուրդի հրահանգներուն եւ որոշումներուն անհնազանդ գտնուած է:

Մինչդեռ Առաջնորդ Սրբազան 25 Ապրիլ 1981 թուակիր եւ 27291 թիւ իր նամակին մէջ կը գրէ `` ... Թեմական Խորհուրդը որոշած է չվաւերացնել ծխական Խորհուրդներու անդամոց ընտրութիւնը մինչեւ որ վճարուին համայնքի տարեսուրբերը `` :

Թեմական Խորհուրդը այսպիսի որոշում մը առնելու եւ կիրարկելու իրաւասութիւնը չունի: Ասոր քացայայտ իսաստր այն է, որ այսպիսի իրաւասութիւն մը ստանալու համար, Թեմական Խորհուրդը` 79րդ Պատգամաւորական Ժողովին 2 Մայիս 1981 Շաբաթ օրուայ նիստի ընթացքին, 20 Փետրուարին իր առած վերոյիշեալ որոշումը իբր առաջարկ Ժողովին կը ներկայացնէ: Պատգամաւորական Ժողովի Առաջարկներու Յանձնախումբը Ժողովականներուն կը յանձնարարէ այս առաջարկին ժխտական քուէարկել, սակայն քուէարկութեան արդիւնք առաջարկը կ`ընդունուի:

6- Շրջաբերականի 6րդ պարբերութեան մէջ չէ յիշուած թէ` ծխական Խորհուրդը իր տուրք վճարելու պատրաստակամութիւնը եւ կամեցողութիւնը ապացուցանելու համար, Թեմական Խորհուրդի երկու ներկայացուցիչներուն առաջարկած է իր տուրքի քանակութեան չափ փոխգիր մը (cheque) տալ Ad Hoc Committee ին, անոնց մօտ in trust պահուելու:

7- Երջարբերականի 7րդ պարբերութեան մէջ ծխական Խորհուրդի փաստաբանին, Առաջնորդ Սրբազանին ուղղեալ 21 Հոկտեմբեր 1981 թուակիր նամակին մասին ակնարկութիւն եղած է:

Առաջնորդ Սրբազանի 2 Հոկտեմբեր 1981 թուակիր անգլերէն նամակին թովանդակութեան լոյսին տակ, ուր կ'ըսուէր թէ՛ Առաջնորդ Սրբազան ծխական Խորհուրդի փաստաբանին հետ տեսնուելէ վերջ, տուրքի փոխանցումը կարելի կը տեսէր, ծխական Խորհուրդն ալ փաստաբանին հետ տեսնուեցաւ, եւ փաստաբանը ապացուցանելու համար թէ՛ ինքը այդպէս բան չէ ըսած, 21 Հոկտեմբեր 1981 թուակիր նամակով Առաջնորդէն կը խնդրէր Ա.Խաչ ծուխին տրուած service ներուն ցանկը՝ իրենց արժէքներով, որպէսզի տուրքի փոխանցումը ըստ օրինի ըլլար:

8- Երջարբերականի մէջ, Առաջնորդ Սրբազանի 24 նոյեմբեր 1981 թուակիր եւ 27539 թիւ նամակին մասին բան չէ գրուած: Առաջնորդ Սրբազան այս նամակին մէջ կը գրէ՝ ... Գանատական կառավարութեան հետ որեւէ օրինական հարցի մը առջեւ գտնուելու պարագային թեմական իշխանութիւնն է որ պիտի ներկայանայ իր փաստաբաններով, պաշտպանելու համար թեմի ծուխերու իրաւական կացութիւնը:

Ծուխը, օրինական գետնի վրայ, տուրքը փոխանցելու դժուարութիւն մը ունի: Առաջնորդարանը եւ իր փաստաբանները ծուխին օգնելու համար արդեօք տակաւին ինչ բանի կը սպասեն: Արդեօք կ'ուզուի որ ծխական Խորհուրդը, տուրքը փոխանցելով Գործակալութեան առջեւ պատասխանատու վիճակի մատնուի եւ Եկեղեցւոյ գոյավիճակը վտանգէ: Թեմական իշխանութիւնը կացութեան քաջատեղեակ է: Սակայն, Առաջնորդ Սրբազան նոյն նամակին մէջ կ'աւելցնէ՝ ... Թեմական Խորհուրդը իր որոշումը պիտի առնէ հեռացնելու Հոգեւոր Հովիւր եւ պաշտօնանկ ընելու ծխական Խորհուրդը: Ուրեմն այն եզրակացութեան կու գտնուի թէ՛ ծխական Խորհուրդը, այսօրուայ պայմաններու տակ եթէ տուրքը փոխանցէ՝ պետութեան առջեւ, իսկ եթէ չփոխաբցէ՝ Առաջնորդարանի առջեւ, ծուխին գոյավիճակը վտանգած պիտի ըլլայ:

9- Այդ անստորագիր շրջարբերականին մէջ, քացարձակապէս չէ յիշուած ծխական Խորհուրդին, Առաջնորդ Սրբազանին ուղղեալ 10 նոյեմբեր 1981 թուակիր նամակը, ուր ծխական Խորհուրդը Առաջնորդ Սրբազանին կ'առաջարկէ վճարել Ա.Ծննդեան Պատարագին աղբններ թուր ծախսերը, առ հաշիւ ծուխի թեմական տուրքին:

Ծխական Խորհուրդը, իր վերոյիշեալ նամակին պատասխան չէ ստացած:

10- Դեկտեմբեր 20, 1981 օր Մասնաւոր ծիսական ժողով գումարուած էր եւ անդամները, ծիսական Խորհուրդին հրահանգած էին Գանատական օրէնքներու հանձայն թեմական տուրքը վճարել: Այս որոշումը թէ Առաջնորդ Արքագանին եւ թէ Թեմական Խորհուրդի Ատենապետին հետազրուած էր: Ծիսական Խորհուրդը, Թեմական Խորհուրդին ներկայանալու եւ այս հարցը վերջնակացնելու համար, Թեմական Խորհուրդէն տակաւին հրաւէր չէ ստացած:

11- 7 Յունուար 1982 թուականին ծիսական Խորհուրդի Ատենապետը, Թորոնթոյի մէջ, Առաջնորդ Արքագանի եւ Թեմական Խորհուրդի Ատենապետին հետ տեսակցած են: Այս տեսակցութեան ընթացքին, ծուխին տուրք վճարելու կամեցողութիւնը եւ սլատրաստակամութիւնը ցոյց տալու համար, Ս. ծննդեան Պատարագի համար եղած բոլոր ծախսերը, անմիջապէս տեղւոյն վրայ, առ հաշիւ ծուխին Թեմական տուրքին վճարել առաջարկուած է: Այս առաջարկը անպատասխան մնացած է:

Այս պարագան խոհիլ կու տայ թէ՛ չկամեցողութիւնը որ կողմէն է:

12- Զրդ սարքերու թեման վերջին հատուածին մէջ, փոխզրին՝ այսինքն տուրքին, օրինական սլատրոններով չկարենալ փոխանցուիլը դարձեալ անհնազանդութիւն ըլլալով կր ներկայացուի:

Կ՝ երեւի թէ շրջաբերականը սլատրաստող անձին մտքին մէջ հետեւեալ բառերուն իմաստը նոյնացած է. `` անհնազանդութիւն `` եւ `` օրինական դժուարութիւն ``: Օրինական դժուարութիւնն ալ, Թեմական իշխանութեան Գանատական օրէնքներու համակերպումովը միայն կարելի պիտի ըլլայ լուծել:

13- Ծիսական Խորհուրդը, Առաջնորդ Արքագանին ուղղեալ 20 Յունուար 1982 թուակիր նամակով, Թեմական իշխանութեան հարց տուած է թէ՛ արդեօք Առաջնորդարանը, Ս. Խաչի գոյալիճակը առանց վտանգելու, տուրքը փոխանցելու ձեւ մը գտած է:

Ցարդ, այս նամակին սլատրաստան չէ ստացուած:

Ծիսական Խորհուրդը, Առաջնորդարանի հետ ունեցած բոլոր թղթակցութիւնները registered mail ով դրկած է:

ԾԻՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ